

ԲԺ. Մ. Ի. ՆԵՅՇՏԱՂՏ



ԱՄԱՌԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ
ԼՈՒԾԵՐԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ
ՆՐԱՆՑ ԴԵՄ

616-053.2
Ճ-53

Հ Ա Ց Պ Ե Տ Ն Ր Ա Տ

20 JUL 2010

ԲԺ. Մ. Ի. ՆԵՅՇՏԻՂՏ


616-053.2

Ջ-53

այ

ԱՄԱՌԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԼՈՒԾԵՐԸ
ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՄ

Քարգմ. Ավ. Շաքիրյան



2604
40

ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿԵՏՆԻՐԱՑ

1940

ԱՄԱՌԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԼՈՒԾԵՐԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՄ

Ամառային լուծերը անել չարիք են փոքրահասակ, մանա-
վանդ ծծկեր յերխաների համար: Ամառնը շատ յերեխաներ
են մահանում լուծերից: Մանուկներին մահացության տեսակե-
տից ցարական Ռուսաստանն առաջին տեղն էր գրավում: Ծըն-
ված յուրաքանչյուր 100 յերեխայից 26-ը մեռնում էր, չապրե-
լով մինչև մեկ տարեկան հասակը: Յերեխաները մահանում է-
յին գլխավորապես ստամոքս-աղիքային հիվանդություններից: Թե
լուծե ից ինչքան շատ յերեխա յեր մահանում, յերևում է նրա-
նից, վոր զանազան հիվանդություննել ից մահացած յուրաքան-
չյուր 1000 յերեխայից կեսը լուծերից էր մահանում:

Զեռք էր առնվում արդյոք վորեւ միջոց այդ զարհուրելի
մահացության դեմ:

Վնչ: Ցարական կառավարությունն այդ խայտառակ փառ-
տի կողքով էր անցնում. բուրժուազիային շատ քիչ էր վշտաց-
նում բանվորների և գյուղացիների զավակների որ ավուր աճող
գերեզմանների թիվը: Ամենից շատ յերեխաներ մեռնում էյին
դյուրում, վորտեղ գլխավոր բժիշկը տատմերն էր իր հոչակա-
վոր ծամած հացով: Այդ ծամած հացը հարյուր հազարավոր փոքրիկ
կյանքեր է գերեզման տարել: Սակայն քաղաքում ավուր մայ-
րը ևս այն ժամանակ հուռու չէր գնում գեղջկուհուց: Շատ նախապա-
շարմուռներ կային փոքրահասակ յերեխաներին դատարարակելու
և կերակրելու մեջ, շատ նախապաշարմուռներ էյին կապված ստա-
մոքս-աղիքային հիվանդությունների պատկերացման հետ: Կանանց
մեծ մասը, ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում, իրենց
անգիտության և սգիտության պատճառով ժամանակից շուտ էյին
զազարում կրծքով կերակրելուց յերեխային, մանկանը տալիս
էյին կովի կաթ, շիլա, ծամած սև հաց:

Հոգատարությունը փոքրահասակ յերեխաների նկատմամբ
իր ամբողջ ծավալով սկսվեց միայն Հոկտեմբերյան հեղափոխու-

թյան հետ: Խորհրդային իշխանությունն օտեղծեց մոր ու ման-
կան պետական պահպանություն և ներկայումս մենք տարեց-
տարի էլ ավելի մեծ նվաճումներ ենք ունենում մանուկների
մահացության դեմ մղվող պայքարում: Ավելանում է մտերների,
կոնսուլտացիաների, ծննդատների և ծննդաբերական բաժան-
մունքների թիվը յաղաքում և գյուղում, տարեց-տարի էլ ավ-
ելի կուլտուրական և դառնում բանվորուհին ու կուլտուսեուհին
և այդ բոլորը նվազեցնում է մանուկների մահացության թիվը:
Վորքան ավելի կազմակերպված է դառնում մեր կյանքը, վոր-
քան շատ է լայնանում մտերների, կոնսուլտացիաների, ծննդ-
առանների ցանցը, այնքան ավելի քիչ են մեռնում փոքրահա-
սակ յերեխաները: Ներկայումս ԽՍՀՄ-ում խիստ պակասել է
մանուկների հիվանդացումն ու մահացումը, օակայն այդ իջեցու-
մը դեռ մեզ չպետք է հանգստացնի:

Խորհրդային իշխանությունը և բոլշևիկների կուսակցու-
թյունը մեզ մոտ յերջանիկ կյանք են օտեղծել, վորտեղ կարելի
է հանգիստ լինել իր յերեխայի վիճակի համար. այդ կյանքը
տալիս է բոլոր հնարավորությունները՝ ճանաչելու յերջանիկ
մայրու թյան և հայրության ուրախությունը, նա թույլ է տալիս
զգալիորեն ավելայնել մեր հայրենիքի բնակչության թիվը և
գրանով իսկ էլ ավելի ուժեղացնել նրա հզորությունը:

Արագորեն աճում է ծննդաբերությունը մեր յերկրում, և
այդ բանն էլ ավելի յե պարտավորեցնում մեզ ամենայն վճառ-
կանությամբ, ամենայն յեռանդով պայքարել փոքրահասակ յե-
րեխաների կյանքն ու առողջությունը պահպանելու համար:

ՅԵՐԵՒԱՆԵՐՆ ԻՆՉԻՑ ԵՆ ՇԻՎԱՆԴԱՆՈՒՄ ԼՈՒԾՈՎ

Փոքրահասակ յերեխաների լուծ առաջացնող պատճառները
բազմազան են: Փոքրահասակ, մանավանդ ծծկեր յերեխայի ստա-
մոքսը ևս փոքր է, դրա համար էլ այդպիսի ստամոքսը չափից
ավելի շատ ուտելիքով ծանրաբեռնելը, նույնիսկ յեթե նա
թարմ է և լավորակ, փոխոց է առաջացնում: Վեց ամսական
ծծկեր յերեխային կերակրելու համար հարկավոր է 180 գրամ
կաթ (մոտ մի բաժակ): Իսկ յեթե նրան տանք 300 գրամ, այ-
սինքն մոտ բաժակ ու կես, նա կա ող է լուծով հիվանդանալ:
Յերբեմն առողջ յերեխան վորոշ ժամանակ տանում է կերածի ավել-
ցուկը, բայց հետո կերածը կանգ է առնում ստամոքսում, ուտեց-

նում և այն, գրգռում նրա պատերը, չափից ավելի յեն լար-
վում ստամոքսն ու աղիքները և յերեխան հիվանդանում և լուծով:
Միանման ֆլառ և ինչպես շատ, այնպես ել չափազանց հաճախ
կերակրելը: Սա լուծերի պատճառներին մեկն է:

Մյուս պատճառը յերեխայի անհամապատասխան սը-
նունդն է: Ամենից առողջ սնունդը յերեխայի համար իր մոր
կաթն է: Վե՛ր մի բան չի կարող փոխարինել նրան: Յերեխայի
համար բոլոր ոգտակար ու հարկավոր նյութերը գտնվում են
մայրական կաթի մեջ: Այնուամենայնիվ շատ հաճախ այս բանը
չեն գնահատում, չեն հասկանում: Մեկ ել տեսար՝ մորը թվաց,
թե իր յերեխան քողցած է և նա իր մեկ ամսական, իսկ յեր-
բեմն ել յերկու շաբաթական յերեխային շիւս յե տալիս: Յորբեմն
առանց խորհրդակցելու բժշկի հետ յերեխայի ուտելիքի մեջ
վորակ ալյուր են մտցնում: Ծճկեր յերեխային ժամանակից շուտ
շիւս և ալյուր տալը ֆլառ և Այդպիսի սնունդն սկսում և թթվել
աղիքների մեջ և լուծ և առաջացնում:

Ծամած հացի մասին խոսել անգամ չարժե: Բարեբախտաբար
այժմ սկսել են այն ավելի քիչ գործադրել: Բայց և այնպես
ներկայումս ել յերբեմն գյուղերում ծակ-ը յերեխաներն շորի
մեջ փաթաթած ծամած սև հաց կամ շիւս յեն տալիս: Յերեխա-
յի փոքրիկ քնքույր ստամոքսը և քնքույր աղիքներն այդ սնուն-
դին փոխոցով ու լուծով են պատասխանում: Ավելի մեծահասակ,
մեկ տարեկանից բարձր յերեխաների համար այդպիսի ֆլառա-
կար սնունդ է յերշիկը, կոնսերվները, արևածաղիկը և այլն:

Լուծի յերբոք պատճառը — փչացած կամ քայ-
քայված ուտելիքն է: Ուտելիքը սովորաբար փչանում կամ քայ-
քայվում և միկրոբների ազդեցութան տակ:

Ի՞նչ բան են միկրոբները, կամ, ինչպես ուրիշ խոսքով
նրանց անվանում են,—բակտերիաները: Իրանք մանրագույն
կենդանի ելակներ են, վորոնց կարելի յե տեսնել միայն մե-
ծացնող ապակիներ ունեցող հատուկ գործիքի, այսպես կոչված,
մանրադիտակի միջոցով:

Այդպիսի մանրադիտակով շատ հաճախ կաթի մեջ կարելի
յե հայտաբերել մեծ քանակութամբ ֆլառակար բակտերիաներ,
առանձնապես շատ բակտերիաներ են լինում կաթնավաճառների
կողմից շուկա բերված կաթի մեջ, վորովհետև նրանք չեն պահպա-
նում հիգիենայի կանոնները՝ վատ են լվանում կաթի ամանները,
բաց են պահում նրանց: Հատկապես վտանգավոր է, յերբ կաթի

կամ մի ուրիշ ուտելիքի մեջ լինում են գիդենտերիայի, տիֆի
կամ հատուկ միկրոբներ, վորոնք փոխում են կաթի ամբողջ
բաղադրութունը: Ամառվա շոգ ամիսներին կեղտոտված կաթը
հաճախ լուծի պատճառ է դառնում:

Ամառը յերեխայի գերտաքացումը նույնպես կարող է
լուծի պատճառ հանդիսանալ: Ամառվա շոգը նվազեցնում է յե-
րեխայի ուժերը: Նրա ստամոքսը և աղիքներն սկսում են վատ
աշխատել:

Վորպեռզի հասկանալի լինի, թե ստամոքսը և աղիքներն
ինչ աշխատանք են կատարում, հարկավոր է մի քանի խոսք ա-
ռել այդ մասին: Ուտելիքը բերանից անցնում է վորկորի մեջ,
վորը կոկորդը միացնում է ստամոքսի հետ: Ուտելիքը վորկորի
միջով անցնում է ստամոքսը, իսկ ստամոքսից՝ աղիքները:
Ստամոքսում և աղիքներում արտադրվում են հատուկ հյութեր-
ստամոքսային և աղիքային հյութեր: Այդ հյութերի ազդեցու-
թյան տակ ուտելիքը տարբարում է անշիւս քաղցրեղ մա-
սերի: Վորոնք այնուհետև կարող են նշանությամբ ներծծվել
արյան մեջ: Իսկ արյունն որդանիցում ասին տեղ կա: Նա
հասում է արյունատար անոթների, կամ ինչպես ասում են,
յերակների մեջ: Այդպիսի անոթները յերևում են ձեռների վրա,
շատ հի՛նար մարդկանց պարանոցի վրա, քունքի վրա: Յերեխայի
յերակները հոնց անոթներն են:

Այդպիսի յերակներ, միայն բոլորովին փոքր և շատ բա-
րակ, անցնում են նաև ստամոքսի ու աղիքների պատերի մեջ:
Ստամոքսի և աղիքների հյութերով մանրացրած և վերամշակած
սնունդն անցնում է այդ յերակների-անոթների մեջ և տարած-
վում ամբողջ մարմնով: Իսկ սննդի մի մասը չի ներծծվում,
նա հարկավոր չէ որդանիցմին: Սննդի այդ մասն անցնում է
սկզբում բարակ, հետո հաստ աղիքների միջոցով և այնուհետև
վորպեռ կղանք դուրս նետվում: Շոգի և յերեխայի գերտաքաց-
ման ազդեցութան տակ ստամոքսում և աղիքներում հյութեր
ավելի քիչ են արտադրվում, ստամոքսն սկսում է ավելի վատ
աշխատել, հետևապես սնունդն ել ավելի վատ է վերամշակվում:

Սա նշանակում է արդյոք, թե խիստ շոգին յերեխան ան-
պայման պիտի հիվանդանա: Վնչ: Կարելի յե ամենաառատիկ
շոգի ժամանակ ևս այնպես անել, վոր յերեխան պաշտպանվի
լուծից:

Մարմնի խիստ ուռեցումը նույնպես կարող է փոքրահասակ յերեխաների մոտ սուր լուծ առաջացնել:

Բացի դրանից, նկատվում են շատ դեպքեր, յերբ լուծի վարակը մեկից մյուսին է անցնում: Այդ լուծի չորքորդ պատճառն է: Շատ հաճախ լուծով հիվանդացած չափահաս մարդիկ վարակում են փոքրահասակ յերեխաներին: Յերբեմն լուծ հիվանդությունը մի յերեխայից մյուսին է փոխանցվում, մանավանդ այն դեպքերում, յերբ չի պահպանվում հիգիենայի և մաքրության հիմնական կանոնները: Հիվանդ յերեխային խնամելու ժամանակ մեծերը պետք է խնամքով լվանան իրենց ձեռները: Հիվանդ յերեխային պետք է առանձնացնել առողջներից: Լուծով հիվանդ յերեխաների բարուրաշորերը պետք է ժամանակին հավաքել: Բացի դրանից, պետք է նկատի ունենալ, վոր առողջ յերեխայի աղբքների մեջ ևս մեծ քանակությամբ ամեն տեսակի միկրոբներ կան. նույնիսկ նորածին յերեխայի աղբքների մեջ, ծնվելուց 10-12 ժամ հետո արդեն միկրոբներ են լինում: Այդ միկրոբները նրան չեն վնասում, բայց բավական է միայն գերկերակրել կամ գերտաքացնել յերեխային արևի տակ, բավական է վոր նա վորևե վոչ թարմ բան ուտի, վորպեսզի այդ միկրոբները, վորոնք առաջ անվնաս եյին, միանգամից վնասակար դառնան: Նրանք խիստ բազմանում են, արտադրում են հատուկ վնասակար նյութեր և նրանցով թունավորում որգանիզմը. սկսում է փսխոց, լուծ, ընդհանուր թուլություն: Այդ բոլորը վերաբերում է ստամոքսի և աղբքների, կամ, ինչպես ասում են, կերակրափողի միկրոբներով վարակվելուն:

Սակայն ինֆեկցիան կարող է փոքրահասակ յերեխաների սուր լուծ առաջացնել նաև ուրիշ ճանապարհով: Աղբքները, մանավանդ ծծկեր յերեխայինը, զգալուն են այն բոլոր հիվանդությունների նկատմամբ, վորոնք առաջանում են միկրոբներից: Իսկ միկրոբները որգանիզմի մեջ են ընկնում վոչ միայն կերակրափողի միջոցով: Առաջին տեղը պետք է դասել զրիպպը, վորի ժամանակ, սկսած միայն հարուխով հիվանդանալու դեպքից է վերջացրած թոքերի բորբոքման դեպքերով, շատ հաճախ լուծ է նկատվում:

Ինչպես զրիպպի ժամանակ փոքրահասակ յերեխաները կարող են ծանր տեսակի լուծով հիվանդանալ: Այդ հարցին շատ գծվար է ճիշտ պատասխան տալ Գիտնականները ներկայումս ուսումնասիրում են այդ հարցը: Սակայն ինչպես էլ վոր լինի, փաս-

տը մնում է փաստ: Գրիպպի ժամանակ շատ հաճախ փոքրահասակ յերեխաները ծանր հիվանդանում են լուծով, վորը յերբեմն մահվան է հասցնում նրանց:

Այդ պատճառով շատ կարևոր է յերեխային պահպանել զրիպպից:

ԻՆՉՊԻՍԻ ԼՈՒԾԵՐՈՎ ԵՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ՅԵՐԵՒԱՆԵՐԸ

Լուծերը տարբեր տեսակի յեն լինում: Լինում են թեթև և ծանր տեսակի լուծեր: Լինում է փսխոցով լուծ և առանց փսխոցի: Յերբեմն հիվանդությունն սկսվում է փսխոցով, իսկ վորոշ ժամանակից հետո յերևան է դալիս նաև լուծը: Լինում են լուծով ու արյունով լուծեր:

Վորքան ավելի ամրակազմ է յերեխան, վորքան ավելի կանոնավոր են նրան կերակրում կրծքով, այնքան ավելի սակավ է հիվանդանում, իսկ յեթե գերկերակրումից կամ կեղտոված ուտելիքից հիվանդանում էլ է, ապա շատ հեշտությամբ է տանում հիվանդությունը և շատ-շուտ էլ կազդուրվում է:

Իհարկե, այդպիսի յերեխան ևս կարող է ծանր տեսակի լուծով հիվանդանալ: Բայց ամենից շատ լուծի յենթարկվում են ծծկեր և թույլ յերեխաները, մանավանդ այն յերեխաները, վորոնք արհեստական ձևով են կերակրվում և նրանք, վորոնք տրամադրված են ջրիկ կղանքին:

Պետք է տարբերել յերեխաների ամառային լուծի յերեք տեսակներ. 1) սուր, հասարակ լուծ կամ սուր դիսպեպսիա, 2) ծանր լուծ կամ տոքսիկ դիսպեպսիա և 3) լորձա-արյունախառն լուծ կամ արյունալուծ (դիզենտերիա):

Հասարակ լուծը կամ սուր դիսպեպսիան միանգամից է սկսվում: Որական մեկ կամ յերկու անգամի փոխարեն յերեխան կեղտոտում է 5-10 անգամ, իսկ յերբեմն էլ ավելի: Խիստ փոխվում է կղանքի տեսքը, դառնում է ջրալի, յերբեմն նրա մեջ շատ կանաչ և սպիտակ կոորչեր են լինում: Շատ հաճախ կղանքը փրփրակալած է լինում: Յերեխան գունատվում է, քաշը պակասում: Աչքերը դառնում են թախճոտ, ախորժակը կորչում է: Յերբեմն դրան միանում է փսխոցը: Յերեխային տանջում են գազերը: ժամանակին միջոցներ ձեռք առնելու դեպքում այդ լուծը շատ շուտով անցնում է: Բայց յերբեմն հասարակ լուծը փոխվում է ծանր տեսակի, վորը

կապված է յերեխայի ամբողջ որգանիզմի ընդհանուր թունա-
վորման հետ:

Մաքր լուծը կամ տոքսիկ դիսպեպսիան շատ վը-
տանգավոր հիվանդություն է ծծկեր և փոքրահասակ յերեխա-
ների համար: Իզուր չէ, վոր նա «մանկական խոլերա» յի կոչ-
վում: Ճիշտ է, սա իսկական խոլերա չի, վորը լինում է համա-
ճարակների փամանակ: Իսկական խոլերայով հիվանդանում են
միայն խոլերայի միկրոբներով վարակվելուց: «Մանկական խոլե-
րայի» փամանակ խոլերայի միկրոբներ չկան, բայց իր վտանգա-
վորությամբնա իսկական խոլերան է հիշեցնում: «Սանկական խո-
լերան» ակզբում կարող է շատ թեթև ընթանալ՝ փոքր լուծ,
յերբեմն փսխում, յերեխան դեմքով առանձնապես չի փոխվում,
միայն մի քիչ գունատվում է: Իայց յեթե փամանակին միջոց-
ներ ձեռք չառնվեն, դրությունը կվատթարանա և յերեխան կա-
րող է մահանալ: Յերբեմն հիվանդությունը միանգամից է սկը-
վում՝ շատ փսխում է, լուծում և 4-6 ոը հետո յերեխան մա-
հանում է:

Այդ փամանակ Թնչ է կատարվում յերեխայի հետ:

Լուծը կրկնվում է որական մինչև 20-30 անգամ, կզանքը
ջրիկ է, յերբեմն գորշ դեղնավուն գույնի, շատ փաթիլներ կան,
շատ գարշաոտ է: Փսխումը հաճախակի, ինչ վոր ուտում, հետ է
տալիս, նույնիսկ մի կում ջուրը փսխոց է առաջացնում: Յերեխայի
դեմքը միանգամից փոխվում է: Քիթը սրվում է, դեմքը դեղ-
նում, աչքերի տակը մուգ շրջանակներ են գոյանում, աչքերը
փոս են ընկնում, դառնում պղտոր, թախծալի: Յերեխան հա-
ճախ հառում է աչքերը, յերբեմն հայացքը յերկար փամանակ
կանգ է առնում վորևէ առարկայի վրա: Յեթե յերեխան յերկար
է հիվանդանում, մաշկը, մանավանդ վորովայնի և ազդերի
վրա, թառամում է: Յերը ձեռք ես տալիս, կարծես փալաս լինի,
ծալքերով հավաքվում է վորովայնի վրա—չի ուղղվում: Այս
նշանակում է, վոր յերեխայի որգանիզմը շատ ջուր է կորցրել:
Այդ փամանակ ձեռներն ու վրտները սառչում են, վրտների
վրա հաճախ այտուցներ են յերևան գալիս:

Այդ լուծերը տարբեր ընթացք են ունենում: Յերբեմն յե-
րեխան, հանկարծ թունավորվածի նման, շատ անհանդիստ է,
նրա վախեցած աչիկները այս ու այն կողմն են վազում, սառ-
տիկ ճչում է, ծանր ու խորը շնչում: Յեթե հիվանդությունը
միանգամից այդպիսի ծանր ձևով է սկսվում, յերեխան կարող է

շատ շուտ, յերբորդ-չորրորդ ոըր մահանալ: Չնայած դրան, փա-
մանակին միջոցներ ձեռք առնելու դեպքում, կարելի յե փրկել
յերեխային:

Շատ հաճախ այդ հիվանդությանը միանում են՝ միջին ա-
կանջի բորբոքում, թոքերի բորբոքում, յերիկամների ավազանների
բորբոքում, աչքերի յեղջերենու վրա կարող են խոցիկներ գո-
յանալ, մաշկի վրա (աճուկներում, նստատեղի վրա) յերևան են
գալիս շփաբորբ, յերբեմն թարախակույտեր: Այս ել ավելի յե
բարդացնում առանց այն ել ծանր ու վտանգավոր հիվանդությունը
և արագացնում յերեխայի կործանումը: Շատ հոգատարություն,
աշխատանք, գիտելիք ու փամանակ է պահանջվում այդպիսի
հիվանդին փրկելու համար: Յեթե յերեխայի առողջությունը
գեպի լավն է գնում, ապա ամենաքիչը մի ամիս է պահանջվում,
վորպեսզի նա փոքր-ինչ ամրապնդվի: Այդ հիվանդությունից
մեռնում է հիվանդացած յերեխաների կեսը, իսկ յերբեմն ել՝ ա-
վելին:

Իսկ յերբեմն ել այսպես է լինում. փսխոցը դադարում է,
իսկ լուծը դեռ շարունակվում է: Յերեխան սաստիկ նիհարում
է, հյուծվում, դեմքի մաշկը կնճռոտվում է, կերածը ոզուտ չի
տալիս նրան: Այդպիսի դեպքերում հարկավոր է յերկար ու հա-
մառորին բուժել:

Լինում են նայել լուծեր լորձով ու արյունով:
Ամենից հաճախ այդ արյունալուծ է (դիզենտերիա): Արյունալուծն
այնպիսի լուծ է, վորն առաջանում է հատուկ միկրոբներով: Իսկ
թե ինչ բան է միկրոբը, մենք արդեն գիտենք: Յուրաքանչյուր
հիվանդություն, մանավանդ վարակիչ, ունի իր միկրոբը:

Լորձով ու արյունով լուծի դեպքում հիվանդանում են,
զլխավորապես, հաստ աղիքները: աղիքները բորբոքվում են,
նրանց մեջ հաճախ խոցիկներ են առաջանում: Ուժեղ լուծի
դեպքում յերեխայի աղիքը հաճախ դուրս է գալիս հետանցքից:
Յերեխան հաճախ է ուզում դուրս գնալ, խիստ զոռ է տալիս,
իսկ կզանքը քիչ է լինում: գալիս է միայն լորձ, թարախ ու
արյուն: Այդ լուծերը կարող են ծանր, միջին ու թեթև ձևով ըն-
թանալ:

Պատահում է, վոր յերեխայի կզանքի մեջ արյուն է լի-
նում, իսկ նա ուրախ է, խաղում է, ուտել է ուզում: Յերբեմն
ել այդ լուծերն ընթանում են վորպես ծանր ու վարակիչ հի-
վանդություն: Յերեխան հյուծվում է, նիհարում, աչքերը գա-

նում են աղոտ, լեզուն փառակալած, շրթունքները՝ չոր, ճաք-
ճքված, մաշկի վրա թարախակույտեր են գոյանում և յերեխան
մահանում ե:

Լորձային արյունոտ լուծը, կամ դեղինտերիան շատ վարակիչ
հիվանդությունն է: Բայց նրա վարակը ողի միջով չի տարվում,
նա փոխանցվում է անմաքուր լվացած ձեռների միջոցով, այդ-
պիսի հիվանդի կղանքով կեղտոտված ուրիշի բարուրաշորերի
միջոցով:

Ամառ ժամանակ այդ վարակի փոխանցողները ճանձներն
են: Նստում է ճանձը հիվանդի կղանքի վրա, յեթե այն ժամա-
նակին դուրս չի տարված, կամ կեղտոտված բարուրաշորերի վրա,
վերցնում է վարակը և տեղից տեղ փոխանցում: Ճանձերը նըս-
տում են գոմաղբի վրա, լինում են կեղտաջրի հորերում, գու-
գարաններում, միկրոբներ են հավաքում և նրանցով վարա-
կում կաթը, ջուրը և այլն: Այդ պատճառով ամեն կերպ պետք է
վոչնչացնել ճանձերին և նրանցից պաշտպանել յերեխայի ու-
տելիքն ու դեմքը (շրթունքները):

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԱՆԵԼ, ՅԵՐԲ ՅԵՐԵԽԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ Ե ԼՈՒԾՈՎ ՅԵՎ ՓՍԽՈՑՈՎ

Այդպիսի յերեխային հարկավոր է անմիջապես բժշկի
ցույց տալ: Յեթե մոտակայքում բժիշկ չկա, յեթե յերեխան
հիվանդացել է գեշերը կամ հիվանդանոցից հեռու գտնված
վայրում, ապա պետք է ձեռք առնել հետևյալ միջոցները:

Հենց վոր մայրը նկատում է յերեխայի լուծն ու փսխոցը
պետք է դադարել նրան կերակրելուց, 12 ժամ նույն խեղ կուրծք
չտալ նրան: Այդ բանը նրան միայն ոգուտ կրերի:

Այդ սովածության ժամանակ տալ միայն բաց թեյ և յե-
ռացրած ու պղպած ջուր: Սաստիկ փսխոցի դեպքում ջուրը տալ
շատ սառը: Լցնել այն բաժակի կամ գավաթի մեջ և դնել սա-
ռուցող կամ ձյունով թասի մեջ. սառուց չլինելու դեպքում դնել
ուղղակի սառը ջրի մեջ, վորը շուտ-շուտ պետք է փոխել: Այդ-
պիսի յեփ աված ջուրը կամ թեյը պետք է մի քիչ քաղցրացնել
շաքարով և խմիցնել թեյի գդալով, փոքրիկ բաժիններով—1—2
թեյի գդալ ամեն մի 15—20 րոպեն մեկ:

12 ժամվա քաղցից հետո կարելի յե սկսել քիչ-քիչ կերա-
կրել յերեխային: Այն ծծկեր յերեխային, վորին մինչև հիվան-
դանալը կրծքով էին կերակրում, պետք է քամած մայրական

կաթ տալ: Այդ դեպքում հարկավոր է նախապես ձեռները լվա-
նալ սապոնով, ստինքներն ու պտուկները լվանալ յեռացրած
ջրով, մաքուր լվանալ բաժակը կամ գավաթը, հետո ողողել
յեռացրած ջրով և մաքուր ձեռներով կաթը կրծքից նրա մեջ
քամել: Սկզբում 2 ժամը մեկ անգամ տալ մեկ թեյի գդալ,
բացի դրանից կես ժամը մեկ տալ 3—5 թեյի գդալ յեփ աված
ջուր կամ բաց թեյ: Միտտ փսխոցի դեպքում կրծքի կաթը
նույնպես պետք է սառը վիճակում տալ: Սակայն ուշացնել չի
կարելի, հարկավոր է անպայման բժշկի դիմել:

Ինչպես վարվել այն ծծկեր յերեխայի հետ, վորի մայրը կաթ
չունի և յերեխան կովի կաթով էր կերակրվում: Միջոցները
նույնն են: Հենց վոր յերեխան ան գալիս լուծն ու փսխոցը, 12
ժամով դադարեցնել յերեխային կերակրելը և տալ յեփ աված
ջուր կամ թեյ: Բաղյածությունից հետո կարելի յե տալ բրնձի
խաշուկ շաքարով, 2 թեյի գդալ բրնձը յեփ տալ մեկ բաժակ
ջրի մեջ այնքան, վոր ջրի կեսը մնա. այնուհետև ավելացնել
նույնքան յեռացրած ջուր և լցնել մաքուր մաղի մեջ. բրնձը
գդալով տրորել 3 անգամ, խաշուկին ավելացնել 1 թեյի
գդալ շաքար և սառը վիճակում, 2 ժամը մեկ՝ 2—3 թեյի
գդալ տալ յերեխային: Կարելի յե 2 ժամը մեկ տալ 1 թեյի գդալ
կես առ կես ջրի հետ խառնած կովի կաթ: Յերեխային պակեցնել
մահճակալում, հատակին չիջեցնել նրան: Յեթե սառել են յերե-
խայի ձեռներն ու վտանները, հարկավոր է նրանց վրա ջեռոց կամ
տաք ջրով շեր դնել: Անհրաժեշտ է ղշերը փաթաթել բարու-
րաշորով կամ անձեռոցով և լավ խցկել խցանով, վոր յերեխան
չխաշվի:

Յերբեմն այս միջոցները միանգամից բարելավում են յե-
րեխայի դրությունը: Փսխոցը դադարում է, յերեխան ավելի յե
աշխուժանում: Բայց այդ դեպքում ևս հարկավոր է անպայման
բժշկի ցույց տալ: Վորքան շուտ նայել բժիշկը յերեխային, այն-
քան ավելի լավ է յերեխայի համար: Յեթե այդ հիվանդությունը
անուշադրության մասնով թեկուզ 3—4 օրով, հետո դժվար կլի-
նի հաղթահարել նրան:

Ամատային լուծերը ծանր չարիք են ծծկեր յերեխաների
համար: Դժվար է պայքարել այդ արատի դեմ, յերբ նա արգեն
մտել է փոքրիկ որդանիզմի մեջ. ամենից ավելի հեշտ է կան-
խել այդ հիվանդությունը:

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԾԾԿԵՐ ՈՒ ՓՈՔՐԱՀԱՍԱԿ
ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԼՈՒԾԵՐԻՑ

Մենք արդեն ասել ենք, վոր ծծկեր յերեխայի համար ամենալավ սնունդը նրա մոր կաթն է: Յեւ իրոք, կրծքով կերակրվող յերեխաներն ավելի լավ են զարգանում, ավելի առողջ, ավելի ամրակազմ են լինում, ավելի քիչ են հիվանդանում, քան արհեստական կերպով կերակրված յերեխաները: Ի՞նչ է հետևում որանից: Ահա թե ինչ: Մինչև 6 ամսական հասակը յերեխային պետք է կերակրել միմիայն կրծքով, վոչ մի լրացուցիչ կեր չտալ: Ուրիշ բան է, յիթե մոր կաթը քիչ է և յերեխան վատ է զարգանում: Այն ժամանակ նրան պետք է լրացուցիչ կեր տալ նաև վեց ամսականից շուտ: Բայց ինչպես կերակրել, ի՞նչով և յերբ ովտեղ լրացուցիչ կեր տալ, այդ կարող է վորոշել միայն բժիշկը: Առանց բժշկի հետ խորհրդակցելու, յերբեք չպետի լրացուցիչ կեր տալ ծծկեր յերեխային:

Յերբեք չի կարելի ամուսնը կրծքից կտրել յերեխային: Ավելի լավ է կերակրելը շարունակել ևս 2—3 ամիս, մինչև ցըրտեղն ընկնելը:

Կրծքով կերակրելու ժամանակ պետք է մաքրություն պահպանել: Կերակրելուց առաջ յեռացրած սառը ջրով լվանալ ձեռները, պտուկները և պտուկների շուրջը: Յերեխային կերակրել անպայման ժամերով, յուրաքանչյուր 3—3½ ժամը մեկ անգամ: Գիշերը յերեխային չպետք է կերակրել, յերեխայի ստամոքսը և աղիքները պետք է 6 ժամ հանգստանան: Չի կարելի յերեխային անկանոն կերակրել, կերակրել հենց վոր նա լաց է լինում: Այդպիսով հեշտությամբ կարելի յե յերեխային գերկերակրել և փխոց ու լուծ առաջացնել:

Ե՛լ ավելի շատ մաքրություն պետք է պահպանել արհեստական կերպով կերակրելու ժամանակ: Յիթե մայրը ինքն է պատրաստում յերեխայի կաթը և վոչ թե կոնսուլտացիայից է վերցնում, շշերն առանձնապես մաքուր պետք է լվանալ: Կովի կաթն անպայման պետք է յեռացնել, յերբեք հում չտալ այն, վորովհետև հում կաթի մեջ բազմաթիվ միկրոբներ կան, իսկ միկրոբները լուծ են առաջացնում: Կաթը պետք է պահել մաքուր ամանի մեջ, ամանն անպայման պետք է ծածկված լինի: Կերակրելուց հետո ծծակը պետք է լվանալ տաք ջրով և պահել ծածկված մաքուր ամանի մեջ (պնակով ծածկված բաժակի կամ գավաթի մեջ):

Կաթը պետք է թարմ լինի, մանավանդ ամուսնը: Ավելի լավ է կաթնախառնուրդները տանը չպատրաստել, այլ պատրաստի վիճակում ստանալ կոնսուլտացիայից: Բայց ամեն տեղ էլ կոնսուլտացիաներ չկան, իսկ յիթե կան էլ, ապա ամեն կոնսուլտացիային կից կաթնախառնուրդ չկա: Այդպիսի դեպքերում մայրը կամ յերեխային խնամող անձնավորությունն ստիպված է ինքը պատրաստել խառնուրդը բժշկի կամ քրոջ ցուցումներով: Յերեխային յե բեք չպետք է տալ փչացած կամ քայքայվող ուտելիք, մանավանդ փչացած կաթ: Մրգեղենն անպայման պիտի լվանալ յեռացրած ջրով:

Մենք արդեն նշել ենք լուծերի պատճառներից մեկը— գերտաքացումը: Ամուսնը յերեխային յերբեք արևի տակ չպետք է պահել, պետք է հերթակայլ նրա արևի տակ լինելը ստվերում լինելու հետ: Ամուսնը յերեխայի հագուստը պետք է թեթե լինի: Յերեխան չպետք է քրտնի, ամեն որ գոլ ջրով վաննաներ պիտի անել, կամ ուղղակի փոքրիկ ցնցուղով գոլ ջուր լցնել նրա վրա: Այդ բանը հաճելի և ոգտակար է նրան: Այն սենյակը, վորտեղ գտնվում է յերեխան, շոգ չպետք է լինի: Ամառ ժամանակ լուսամուտներն ամբողջ որը պետք է բաց պահել, իսկ վորպեսզի ճանձեր չմտնեն, լուսամուտները պիտի ծածկել մարլայով կամ մետաղե ցանցով: Յերեխան պետք է առանձին մահճակալի մեջ քնի: Նրա սպիտակեղենը միշտ պետք է մաքուր ու թարմ լինի: Մաքրությունը, թարմ ողը, լավ խնամքը և կանոնավոր կերակրելը կպաշտպանեն յերեխային շատ հիվանդություններից, այդ թվում նաև լուծերից:

Ամեն ինչում պետք է մաքրություն պահպանել, յերեխային չմոտենալ կեղտոտ ձեռներով, այն սենյակում, վորտեղ գտնվում է յերեխան, հատակն ու բոլոր իրերը պիտի մաքրել խոնավ շորով, վորպեսզի նրանց վրա փոշի չմնա: չթքել հատակին, փշրանքները հավաքել սեղանից, աթոռներից, նստարաններից, հատակից:

Այն սենյակը, վորտեղ գտնվում է յերեխան, յեթե մաքուր լինի, աշտեղ ավելի քիչ միկրոբներ կլինեն: Միկրոբները զտոնվում են գլխավորապես փոշու և կեղտի մեջ: Այդպիսի կեղտը ընկնում է ուտելիքի մեջ, այնտեղ մեծ քանակությամբ միկրոբներ են զարգանում և յերեխան այն ուտելով, հիվանդանում է լուծով:

Մենք արդեն ասել ենք, թե ինչ վնաս են տալիս ճանձերը:

Վորպեսզի ճանճեր առաջ չգան, հացի վշրանքները չպետք է թողնել սեղանին. շաքարը, մուրաբան, մեղր և այլն պետք է խնամքով ծածկված լինեն և ճանճերի համար անմատչելի: Բացի դրանից, անհրաժեշտ է կախել ճանճերի դեմ հատուկ կաշուն թուղթ:

Հատուկ նախազգուշական միջոցներ պետք է ձեռք առնել ընտանիքի անդամներից վորևե մեկի լուծով հիվանդանալու դեպքում, մանավանդ յեթե հիվանդութունն ուղեկցվում է լորձով ու արյունով: Փոքրիկ յերեխաներին չպետք է թույլ տալ, վոր մոտենան այդպիսի հիվանդի և չթողնել, վոր նա ոգտվի այն պետքանոթից, վորից ոգտվում է հիվանդը:

Յեթե լուծով հիվանդանում է յերեխային կրծքով կերակրող մայրը, նա պետք է պահպանի հետևյալ կանոնները՝ 1) կերակրելուց առաջ խնամքով լվանա իր ձեռները տաք ջրով, սապոնով ու խոզանակով, 2) լվացվելուց հետո, ինչպես հարկն է, ձեռները տրորել սպիրտի, կամ ողու մեջ թրջված բամբակով, կամ թե ձեռները լվանալ ուժեղ կերպով ջրի հետ բացած նաշագրի պիրտով (1 գդալ նաշագրի սպիրտ մեկ բաժակ ջրին), 3) նախքան յերեխային կուրծք տալը պտուկները լվանալ յեռացրած ջրի մեջ թրջած բամբակով, 4) ամեն անգամ դուրս գնալուց հետո վերը ցույց տված ձևով խնամքով լվանալ իր ձեռները:

Վոչ վորքի չպէք է թույլ տալ, վոր չլվացած ձեռներով մոտենա յերեխային, մանավանդ այնպիսի անձանց, վորոնք իրենք հիվանդ են լուծով, այդ անձինք կարող են վարակել յերեխային: Յերբեմն պատահում է, յերա վորևե մեծ մարդ կամ յերեխա հիվանդ է թեթե տեսակի լուծով, իսկ այն յերեխան, վորին մոտեցել են այդ հիվանդները կամ զրկել չլվացած ձեռներով, շատ ծանր է հիվանդանում, գիտակցության կորուսումով, զանազան բարդություններով, ինչպես միջին ականջի բորբոքումը, թոքերի բորբոքումը և այլն:

Այդ բարդություններն ավելի յեն վատացնում յերեխայի առանց այն ել ծանր դրությունը, լուծը սաստկանում է, որդանիզմից սկսում է անհետանալ ջուրը, յերեխան շատ շուտ «ցամաքում է», թուլանում է նրա սիրտը և գործը կարող է մահով վերջանալ:

Վոչ մի դեպքում տարբեր յերեխաների միևնույն բարուրաշորով չմաքրել նրանց դուրս գնալուց հետո: Լուծով հիվանդ յերեխան պետք է ունենա իր առանձին սպիրտակեղծնը, անկողինը և ամանները: Այս կանոնները կատարելու դեպքում կա-

րելի յե ընտանիքում յեղած մյուս յերեխաներին պաշտպանել ծանր հիվանդանալուց:

Մենք վերն առացինք, վոր գրիպը կարող է փոքրահասակ յերեխաների մոտ ծանր լուծ առաջացնել: Այդ պատճառով յերեխաներին պետք է պաշտպանել ամեն տեսակի վարակիչ հիվանդություններից, և մանավանդ գրիպից:

Վոչ վորքի թույլ չտաք համբուրել ձեր յերեխաներին և ինքներդ ել չհամբուրեք նրանց շրթունքները: Յեթե դուք նույնիսկ փոքրիկ հարթուխ ունեք, ավելորդ տեղը չմոտենաք յերեխային: Իսկ յեթե հարկավոր է մոտենալ յերեխային կրծքով կերակրելու, բարուրաշորերը փոխելու կամ լողացնելու համար, ապա հարթուխ ունենալու դեպքում, յերեսներդ մարլայի կապ դրեք, այնպես, վոր նա ծածկի ձեր քիթն ու բերանը: Յերքեք չհազաք ու չփռաք յերեխայի դեմքին: Յեթե հարթուխի հետ ձեր ջերմատիճանն ել է բարձրացել, այս կանոններն առանձնահատուկ ուշադրությամբ պահպանեցեք:

Չպետք է մոռանալ, վոր ամռանը յերեխան ծարավում է: Յերեխային պետք է յեռացրած սառը ջուր խմացնել, հույս չդնելով, թե մոր կամ կովի կաթը կհագեցնեն նրա ծարավը, պետք է հիշել, վոր յերեխայի համար կաթը ուտելիք է և վոչ թե խմելիք:

Ամառային լուծերի դեմ պայքարի գործում խոշորագույն ոգուտ են տալիս մսուրները՝ քաղաքներում, կոլտնտեսություններում և խորհրտնտեսություններում: Անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր բանվոր, բանվորուհի, կոլտնտեսական և կոլտնտեսուհի հասկանա մսուրների ամբողջ նշանակությունն ու ոգուտը:

Մանուկների մահացության և մանավանդ ամառային լուծերի դեմ մղվող պայքարում մսուրներն արդեն շատ բան են արել և կարող են ել ավելի շատ անել: Այն ուժիմը, վոր անց է կացվում մսուրներում՝ մաքրություն պահպանելը, զբոսանքը թարմ ոգում, կանոնավոր սնումը, այդ ամենը յերեխային առողջացնում են և վորքան ավելի ամուր է նրա որգանիզմը, այնքան ավելի քիչ է նա յենթակա ամեն տեսակի հիվանդությունների, այդ թվում նաև ամառային լուծերի: Յուրաքանչյուր խորհրտնտեսության, կոլտնտեսության մեջ անպայման պետք է մուր լինի, չխոսելով արդեն արդյունաբերական կենտրոնների մասին: Վորքան ավելի շատ բացվեն լավ մսուրներ, այնքան ավելի քիչ յերեխաներ կմեռնեն լուծերից և ուրիշ հիվանդություններից:

Մեծ ոգուտ ե բերում նաև մայրության ու մանկության պահպանության կոնսուլտացիաների կարգավորված աշխատանքը քաղաքում և գյուղում: Անհրաժեշտ ե սերտ կապ պահել իր կոնսուլտացիայի հետ, կանոնավոր կերպով յերեխային տանել բժշկի մոտ, ճշտությամբ կատարել յերեխային խնամելու վերաբերյալ կոնսուլտացիայի բժշկի և քոջ բոլոր խորհուրդները, յերեխայի հիվանդանալու առաջին նշանների դեպքում անմիջապես տեղեկացնել կոնսուլտացիային և հիվանդ յերեխային տանել բժշկի մոտ:

Ներկայումս, յիրք մեր յերկրի բնակչությունն այնպես արագ կերպով ե ավելանում, մսուրների ու կոնսուլտացիաների նշանակությունն առանձնապես բարձրանում ե: Կուսակցությունն ու կառավարությունը հսկայական ուշադրություն են հատկացնում մանկական հիմնարկներին, մեծ հոգատարությամբ են շրջապատում փոքրիկ քաղաքացիներին, կոմսենիպմի ապագա կառուցողներին: Որեցոր ավելանում ե մսուրների թիվը քաղաքներում, կոլտնտեսություններում և խորհատեսություններում:

Այս բոլորի հետ միասին անհրաժեշտ ե, վոր յուրաքանչյուր մայր շատ կարգա յերեխաներին խնամելու վերաբերյալ սգտակար գրքեր, իսկ յեթե յերեխայի մայրն անգրագետ ե կամ կիտագրագետ, նա պետք ե շատ շուտ վերացնի այդ թերությունը: Ապացուցված ե, վոր գրագետ մայրերի յերեխաներն ավելի քիչ են մեռնում, քան անգրագետներինը: Այդ հասկանալի յե. գրագետ մայրը կարող ե կարգալ ամեն մի սգտակար գիրք և ավելի շուտ կհասկանա, թե ինչ առաց իրեն բժիշկը:

Խորհրդային յերկրում ստեղծված են բոլոր պայմանները մի շարք ծանր հիվանդությունների, այդ թվում նաև ամառային մանկական լուծերի դեմ հաջողությամբ պայքարելու համար: Առողջ և լուսավոր բնակարանների լա ն շինարարությունը, մի շարք խոշոր քաղաքների վերակառուցումը, կոլտնտեսային կարգերի ամրապնդումը գյուղում, քաղաքային և գյուղական բնակչության կուլտուրական աճը—այս բոլորն ստեղծում են անհրաժեշտ պայմաններ՝ լայն առողջապահական միջոցառումներ անցկացնելու համար:

Հենվելով մեր հայրենիքի բոլոր նվաճումների վրա, անդադրում կերպով բարձրացնելով իրենց կուլտուրական մակարդակը, մեր յերկրի աշխատավորները կարող են ամենակարճ ժամանակամիջոցում վերացնել և պետք ե վերացնեն անցյալի ծանր ժառանգությունը—մանուկների մահացությունն ամառային լուծերից:

Պատ. խմբագիր՝
Բժ. Ս. Հաբուրյուցյան
Տեխ. խմբագիր՝
Ա. Գասպարյան
Սրբագրիչ՝
Մ. Թումանյան

Գլավիտի լիազոր՝ Բ—1156. Հրատ. 5209.

Պատվեր 278. Տիրաժ 2000.

Հանձնված ե արտադրության 25/III 1940 թ.

Ստորագրված ե տպագրության 26/IV 1940 թ.

Հայպետհրատի տպարան, Յերևան, Լենինի 85

2604
40



ԳԻՆԸ 40 ԿՈՄ.

5402

ԺՐ Մ. Ի. ՆԵՅՏՏԱԴՏ
ԼԵՏՆԻԵ ԴԵՏՔԻԵ ՍՈՆՈՏՅԻ
Ի
ԲՕՐՅԵԱ Տ ՆԻՄԻ
Արմգիզ, Երեւան, 1940 ր.